ԹԵՄԱ 3. ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐԸ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ XIX ԴԱՐՈՒՄ

§ 22. ՕՍՄԱՆՅԱՆ ԹՈՒՐՔԻԱՆ XIX ԴԱՐՈՒՄ. ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՓՈՐՁԵՐԸ

1 Հույների ազգային-ազատագրական շարժմանը աջակցում էր անգլիացի բանաստեղծ Ջորջ Բայրոնը: Բայրոնը իր ստեղծագործություններով բարձրացնում էր ազատատենչ հույների հայրենասիրական ոգին և միջազգային հանրության ուշադրությունը հրավիրում Հունաստանում տեղի ունեցող իրադարձություններին: Հույների ապստամբության նախօրեին նա հայոց լեզու էր ուսումնասիրում Վենետիկի Մխիթարյան միաբանությունում: Լուր ստանալով ապստամբության մասին՝ անմիջապես օգնության շտապեց հույներին և, ցավոք, զոհվեց ազատագրական այդ պայքարի ընթացքում:

Հովհաննես Այվազովսկի (1899 թ.)
Բայրոնը Վենետիկի Մխիթարյան միաբանությունում

2

Մուհամեդ Ալիի կառավարման օրոք վերելք ապրեց Եգիպտոսի հայ համայնքը: Արտաքին գործերի և առևտրի նախարարը Պողոս Յուսուֆյանն էր (1768–1843): Նա պետական գործչի մեծ համբավ էր վայելում Եվրոպայում: Նրա քրոջ որդին՝ Նուպար Նուպարյանը, որ կրթություն էր ստացել Եվրոպայում, հետագայում դարձավ Եգիպտոսի կառավարության նախագահը և նշանակալից ավանդ բերեց Սուեզի ջրանցքի կառուցման գործում: